ՍԱՄՈՒԽԱՅԻ ՄԱՅՐ ԴԻՑՈՒՀՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Խեթ թագավորների և թագուհիների պաշտելի դիցուհիներից մեկը Սամուխա քաղաքի ^{d}INANNA-ն էր[1]: Սամուխան (^{m}Sa-mu-ha), գտնվելով բուն խեթական տարածքներից արևելք՝, կովախնձոր է եղել խեթերի և նրանց արևելյան և հյուսիսարևելյան հարևանների միջև: Մ.թ.ա. XV–XIV դդ. սահմանագլխին այն գտնվում էր Հայասա - Աղիի կողմում՝, որի կողմից հավանաբար գրավվել էր մ.թ.ա. XVդ. վերջին, երբ դաշնակից երկրների և ցեղերի մի մեծ խմբավորում հարձակվել էր խեթական թագավորության վրա: Ավելի ուշ խեթ թագավոր Խաթասիլի III-ը (մ.թ.ա. 1289–1265 թթ.) արձանագրել է. «Դրսից՝ Աղիից, հայտնվեց թշնամին, ավերեց ամբողջ Վերին երկրները և Սամուխա քաղաքը գարձրեց իր սահմանը»[4]: Ա. Գյոցեն նշում է, որ խեթ-աղիական սահմանն անցել է «Վերին երկրով», որտեղ և գտնվել է Սամուխան[5]: Սամուխայի տեղադրության ճշգրտումը կարևորվում է նրա դիցուհու պաշտամունքի ակունքների բացահայտման տեսանկյունից:

Ջ. Գարսթանգի և Օ. Գարնիի համատեղ աշխատության մեջ Սամուխան, համարվելով «Վերին երկրի» մայրաքաղաքը[6], տեղադրվում է Հալիս (Կըզըլըրմաք) գետի վերնագավառում[7]: Օ.Գարնին, այս հարցում կասկածներ ունենալով, հարցականով փորձում է Սամուխան նույնացնել հետագա Մալաթիայի հետ[8]: Ի. Մ. Դյակոնովը, քիչ հավանական համարելով Սամուխայի հալիսյան տեղադրությունը (գետի վերնագավառում), հակված է այն որոնելու Գայլ գետի (Քելքիթ) ավերին[9]: Հ.Մանանդյանը Սամուխան տեղադրելով Արևմտյան Եփրատի մեծ գալարից հյուսիս, երբ գետը փոխե-

---

[1] «Keilschrifturkunden aus Boghazkoi» *(այսուհետև՝* KUB), Staaliche Museum zu Berlin, Vorderasiatische Abt., Hf. 1-30. Berlin, 1923-1939, XII, 5, I, 11-12, XXIX, 7, I, 7-18, XXXII, 130, I, 1-13.

[2] KUB, I, 1, IV, 2-3, XI, 11, I, 10, XIX, 11, I, 10, XXXII, 130, I, 1; «Keilschrifttexte aus Boghazkoi» *(այսուհետև՝* KBo), Wissenschaftliche Veröffentlichung der Deutschen Orient Gesellschaft. Leipzig – Berlin, 1916-1926, III, 4, III, 45, VI, 29, II, 20, VI, 29, II, 28.

[3] KBo, VI, 28, I, 11-12; A. G o t z e. Kizzuwatna and the Problem of Hittite Geography.– «Yale Oriental Series»,, New Hawen, 1940, p. 21; O. P. Г е р н и. Хетты. М., 1987, с. 28.

[4] *KBo, VI, 28, I, 11-12.*

[5] A. G ö t z e. *Նշվ. աշխ., էջ 21–22.*

[6] J. G a r s t a n g and O. R. G u r n e y. The Geography of the Hittite Empire. London, 1959, p. 33.

[7] *Նույն տեղում, էջ 35-36:*

[8] O. P. Г е р н и. *Նշվ. աշխ., էջ 121:*

[9] И. М. Д ь я к о н о в. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 36, 82, пр. 16.

լով իր արևմտյան ընթացքը շրջվում է հարավ-արևելք, այն նույնացնում է ուշ ժամանակների Զեմուխա բնակավայրի հետ[10]: Վ. Խաչատրյանի կարծիքով, Սամուխան գտնվել է Արմտանի (Արմբուդան) մոտ[11]:

Հ. Մանանդյանի և Վ. Խաչաարյանի առաջարկած տեղադրությունը հավանական է այնքանով, որ խեթական արձանագրություններից մեկում Սամուխան հիշատակված է Արևմտյան Եփրատի հոսանքն ի վայր՝ Բիտիյարիգա բնակավայրից հետո, իսկ վերջինս հիշատակվում է Խախա բնակավայրի հետ[12]: Բիտիյարիգան հետագա Բթառիճն է՝ Երզնկայից հարավարևելք[13], իսկ Խախան հետագա Խախն է՝ Երզնկայից արևմուտք[14]: Ուրեմն, Արևմայան Եփրատի հոսանքն ի վայր ընթանալով միայն կարելի էր հասնել Սամուխա: Կարծում ենք, որ Սամուխայի տեղադրությունը Արևմտյան Եփրատի մեծ գալարից հյուսիս՝ հետագա Մեծ Հայքի Աղյուն (ուշ շրջանում՝ Արմտան, Դուրուչայ)[15] գավառի տարածքում, կասկած չի հարուցում: Ռազմավարական տեսակետից կարևոր նշանակություն ունեցող այս տարածքը խեթերի համար հենակետ էր ծառայում դեպի հյուսիս՝ արևելապոնտական կասկերի, և դեպի արևելք՝ Հայասա-Ազիի դեմ արշավելու համար[16]: Ըստ Հ. Մանանդյանի, խեթերի մղած ռազմական գործողությունները, որոնց նպատակը եղել է Սամուխային տիրանալը, մղվել է Կամախի (Քեմախ) և Տևրիկի (Դիվրիգի) միջև[17]:

Սամուխայի "INANNA դիցուհուն, շումերաաքքադական համադրումներից ելնելով, կոչում են «Սամուխայի Իշտար»[18] և որպես Իշտար դիցուհի նույնացնում են կամ խուռիական Սաուսկա դիցուհու[19] կամ դարձյալ խուռիական համարվող Խեպատ դիցուհու հետ[20], իսկ Սամուխայի դիցուհու պաշտամունքը, դրա «հիման» վրա համարում են խուռիական[21]: Սամուխայի դիցուհու «խուռիականությունը» ոչնչով ապացուցված չէ: "INANNA գաղափարադրի տակ հանդես եկած Հայկական լեռնաշխարհի այս դիցուհին օժտված է եղել այնպիսի ֆունկցիաներով, որոնք հատուկ էին նաև այդ նույն գաղափարադրի տակ հանդես եկած Հայկական լեռնաշ-

---

[10] Я. М а н а н д я н. О некоторых спорных проблемах истории и географии древней Армении. Ереван, 1956, с. 77, 116.

[11] В. Х а ч а т р я н. Восточные провинции Хеттской империи.— "Вопросы топонимики". Ереван, 1971, с. 60, 95, 142, 145. *Ավելի ուշ Վ. Խաչատրյանը ևս նույնացրեց Սամուխան հետագայի Զեմուխի հետ: Տե՛ս Վ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանը մ.թ.ա. XV–VIII դարերում (Հայոց հին պատմություն). Երևան, 1998, էջ 54:*

[12] KBo, III, 6, II, 5-8.

[13] Гр. К а п а н ц я н. Историко-лингвистические работы к начальной истории армян.— "Древняя Малая Азия". Ереван, 1956, с. 91-92; Я. М а н а н д я н. *Նշվ. աշխ., էջ* 90, 112, В. Х а ч а т р я н. *Նշվ. աշխ., էջ* 54-55, 65:

[14] В. Х а ч а т р я н. *Նշվ. աշխ., էջ 53-54, 87:*

[15] *Ս. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 33, 106:*

[16] *Ն. Ա գ ո ն ց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 34,* И. М. Д ь я к о н о в. *Նշվ.աշխ., էջ 90:*

[17] Я. М а н а н д я н. *Նշվ.աշխ. էջ 115-116:*

[18] О. Р. Г е р н и. *Նշվ.աշխ., էջ 36, 155, 156:*

[19] *Նույն տեղում, էջ* 122, 127; М. Х а ч и к я н. Шавушка.— В. кн.: "Мифы народов мира" (*այսուհետև՝* МНМ), т. II, М., 1988, с. 636.

[20] О. Р. Г е р н и. *Նշվ. աշխ., էջ 121:*

[21] И. М. Д ь я к о н о в. *Նշվ. աշխ., էջ 83, ծան. 17:*

խարհի մյուս շրջանների դիցուհիներին մասնավորապես հայասականին[22] և իսուվականին[23]: Իսկ դրանք Մայր դիցուհիներ էին[24] և որպես այդպիսիք զուգահեռներն են առաջավորասիական շատ մայր դիցուհիների, մանավանդ մեր հեթանոսական Անահիտի:

Հայտնի է, որ Անահիտ դիցուհու պաշտամունքի գլխավոր օջախը հին Հայաստանում եղել է հունահռոմեական աղբյուրներում Ἀκιλισήνη//Acilisenae կոչված նահանգը, որը ներառել է ոչ միայն նույնանուն Եկեղիք//Եկեղեաց գավառը, այլև Արևմտյան Եփրատի միջին հոսանքի շրջանում գտնվող մյուս գավառները՝ գետի մեծ գալարից հյուսիս տարածված Աղյուն գավառը ներառյալ[25]: Այս տարածքը դիցուհու անունով նույնիսկ կոչվել է Անահտական//Ἡ Ἀναιτιδος χώρα, իսկ դրա հյուսիսային սահմանագլխին գտնվող լեռը՝ Աթոռ Անահտայ[26]: Կ. Մելիք-Փաշայանը հակված է անգամ Ակիլիսենե//Եկեղիքը համարելու Անահիտի պաշտամունքի ձևավորման օջախը, որտեղից, նրա կարծիքով, այն տարածվել է մի կողմից դեպի հարավ՝ Տարոն–Սասուն–Վասպուրական, մյուս կողմից դեպի արևելք՝ Այրարատ–Սյունիք և այլուր[27]: Ճիշտ է հելլենիզմի դարաշրջանում Անահիտը նույնացվում էր հունական Արտեմիսի հետ, որը Մայր դիցուհի չէր Հունաստանում, բայց այդպիսին էր Փոքր Ասիայում (օրինակ, Եփեսոսի Արտեմիսը): Պատահական չէ, որ Արևմտյան Եփրատի ավազանում պաշտված Անահիտին Պլուտարքոսը «պարսկական Արտեմիս» է կոչում՝ շեշտելու համար նրա նախահելլենիստական բնույթը և տարբերությունը բուն հունական Արտեմիսից: Լուկուլլոսի հռոմեական բանակի ներխուժումը Մեծ Հայք նա սկսում է հետևյալ դրվագի նկարագրությամբ. «Այդ տեղերում արածում էին պարսկական Արտեմիսին նվիրաբերված երինջներ, իսկ նրան Եփրատի այն կողմում բնակվող բարբարոսները (Մեծ Հայքի հայերը – Ս. Պ.) պաշտում են բոլոր աստվածություններից ավելի: Այդ երինջները նախատեսված են միայն զոհաբերությունների համար. դիցուհու ջահաձև խարանով նրանք ազատ շրջում են մարգում և, հարկ եղած դեպքում, նրանցից մեկին բռնելը քիչ ջանքեր չի պահանջում»[28]:

Հանրահայտ փաստ է, որ հայ ժողովրդական հավատալիքներում քրիստոնեական Աստվածածինը հանդես է բերում իր նախորդ Անահիտ դիցուհուն բնորոշ շատ գծեր: Հին Ակիլիսենեի տարածքում գանվող ուշ ժամա-

---

[22] KUB, XXVI, 39, IV, 26.

[23] KUB, VI, 45, II, 64.

[24] Ս. Պետրոսեան. Հին հայոց եռամասն ամսուայ խորհուրդը.– «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1996, էջ 420-432: Հմմտ. В. И. Авдиев. История древнего Востока. Л., 1953, с. 106.

[25] Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Изд. второе. Ереван, 1971, с. 54-55; Հ. Մանանդյան. Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պատին-դերյան քարտեզի. Երևան, 1936, էջ 71, Ս. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 50.

[26] Ս. Կրկյաշարյան. Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ. Երևան, 1970, էջ 151, Գ. Սարդարյան. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Երևան, 1966, էջ 237, Հայ ժողովրդի պատմություն. հ. I, Երևան, 1971, էջ 14, 26:

[27] Կ. Մելիք-Փաշայան. Անահիտ դիցուհու պաշտամունքը. Երևան, 1963, էջ 114:

[28] Plut., Lucull., XXIV.

նակների Կամախի գավառը XIX դ. վերջին ուներ դեռևս գործող 22 եկեղեցիներ և վանքեր, որոնցից 13-ը կրում էին Սուրբ Աստվածածնի անունը[29]: Գավառում կար նաև նույն անունով ուխտատեղի[30]: Անշուշտ, տեղական Աստվածածնի պաշտամունքը պարունակելու էր ինչպես Անահիտ դիցուհու, այնպես էլ նրա տեղական նախորդ Մայր դիցուհու պաշտամունքից եկող բաղադրիչներ: Իսկ դա լինելու էր տեղական այն դիցուհին, որի պաշտամունքը տարածված է եղել ոչ միայն Սամուխայում (ճիշտ է, գլխավոր կենտրոնը Սամուխան էր), այլ նաև շրջակա մարզերում մասնավորապես "Hanhana կոչված երկրում[31]:

Hanhana երկիրը կամ համարում են խեթական թագավորության բուն մարզերից մեկը[32], կամ տեղադրում հետագա եկեղիքի տարածքում[33]: Մեր կարծիքով, այն պետք է տեղադրել հետագա Դարանաղիում, որի ամրոցարքավայրը կոչվում էր թե՛ Անի[34], թե՛ Հանի[35] : Սեպագրային Han-hana տեղանվան նույնական երկու բաղադրիչներն էլ, Անի//Հանի տեղանվան նման (<Ան-ի//Հան-ի), իրևնց հիմքում ունեն հայերեն հան//Հանի «մեծ մայր, տատ» բառը: Սրա հնդեվրոպական *an-//*Han- նախաձևն է ընկած ազգակից լեզուների հետևյալ բառերի հիմքում՝ խեթ. hannas/hanni, հուն. ἀννίς, ափղ. ana, պրուս. ane, հբգ. ana «տատ», լատին. annus «պառավ», «դուշակուհի» և այլն[36]:

Հնդեվրոպական *an-//*Han- արմատից ծագած բառերի դիցանվանական կիրառման տեսանկյունից համմտ. խեթական Մայր դիցուհիներից մեկի Hanna-hanna (<*hanna «տատ» + *hanna «տատ») անունը[37] և Անահիտ դիցուհու մեկ ուրիշ՝ Անի, անունը[38]: Անի//*Հանի անունը կրած դիցուհու և Անի//Հանի քաղաքի նախնական փոխադարձ կապի տեսանկյունից ուշադրավ է մեր պատմահոր այն վկայությունը, ըստ որի, մինչև Եկեղեաց գավառի Երիզա ավանում հաստատվելը Անահիտ//Արտեմիսի կուռքը (Արամազդ//Զևսի, Նանե//Աթենասի, Աստղիկ//Ափրոդիտեի և Միհր//Հեփոսաոսի կուռքերի հետ միասին) հանգրվան է ունեցել Դարանաղի գավառի

---

[29] Գ. Սրվանձտյան. Երկեր. հ. II, Երևան, 1982, էջ 476, 493–494:

[30] Հակոբ Մնձուրի. Երկեր. Երևան, 1986, էջ 422:

[31] KUB, V, 1, I, 86; XXII, 25, I, 25; KBo, VI, 29, I, 27.

[32] A. Götze. Kleinasien zur Hethiterzeit. Heidelberg, 1924, S. 7, 13.

[33] В. Хачатурян. Նշվ. աշխ., էջ 50-54:

[34] Ագաթանգեղոս, ՃԹ, 785, Բուզանդ, Գ, ժա, Դ, լդ, Խորենացի, Բ, ժբ, ժդ, լը, ծդ, կդ, հէ, Գ, ժ, լե:

[35] Խորենացի, Բ, խը, Գ, խե:

[36] Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. III, Երևան, 1977, էջ 33, Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Т. II, Тбилиси, 1984, с. 766.

[37] Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Նշվ. աշխ., հ. II, էջ 605, 766:

[38] Վերջինս ունեցել է իր Անեայ, Անէիդ, Անիի տարբերակները (Ղ. Ալիշան. Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 137-138): Միևնույն աստվածությանը արված տարբեր, հաճախ տարածադում, անունների վերաբերյալ Կ. Մելիք-Փաշայանը դրում է. «Տվյալ դեպքում դիցական անունները մեզ համար ստանում են ձևական, երկրորդական նշանակություն: Դրանք կարելի է ասել, սոսկ տեղական պիտակներն էին մի ընդհանուր, ունիվերսալ բնույթ կրող պաշտամունքի՝ իր զարգացման տարբեր փուլերում» (Կ. Մելիք-Փաշայան. Նշվ. աշխ., էջ 86):

Անի ամրոցում[39]: Անի//Հանի տեղանվան դիցանվանական ծագման՝ Մայր դիցուհու անունից ծագած լինելու, մասին կարող է վկայել նաև Հայասա-Ազիի ցեղապետ - արքա և խեթ թագավոր Մուրսիլի II-ի (մ.թ.ա. 1345–1315թթ.) հակառակորդ Անիյայի անունը: Խեթական արձանագրություններում նա կոչվում է կամ «Անիյա՝ թագավոր Ազիի» (mAn-ni-ja LUGUL mAz-zi)[40], կամ «Անիյաս՝ կառավարիչ Ազիի» (mAn-ni-ja-aš EN mAz-zi)[41] (հմմտ. հունական Մայր դիցուհու Δημήτηρ//Δημητρα անունից սերած Δημήτριος արական անձնանունը): Ըստ երևույթին, Անիյան, ցեղապետ-արքա լինելով հանդերձ, եղել է նաև քրմապետ՝ Մայր դիցուհի Անիի քուրմ:

Աշխարհի շատ ժողովուրդների առասպելաբանություններում առյուծի կերպարը օժտված է յուրօրինակ իմաստաբանական ծանրաբեռնվածությամբ: Նա թե՝ մայրության խորհրդանիշն է, թե՝ կենդանական դրսևորումներից է շատ Մայր դիցուհիների, թե՝ մարմնավորումն է ցանկասիրության[42]: Առյուծի կերպարի մայրության խորհրդանիշը լինելու մասին է խոսում առասպելաբանական հենք ունեցող հայկական «Առուծեն սըղան» հեքիաթը: Մոր կողմից անտառում լքված ծծկեր երեխային տեր է կանգնում նոր ծննդաբերած առյուծը: Եվ երբ «Առուծը մուտացավ, խոխան չըրքթաթ տալավ բըդա առուծը քյընաց, սկսեց առուծին կաթնը ծծել: Տհենց էլ առուծը ամեն օր էտ համան վախտը կյալիս ար, էտ խուխեն ծըեծ տալիս...[43] Խոխան կանոխ մըծացավ: Առողճ ար, շատ օժավ ար, ամմա մըխրեգյ մըզմազոտ ար, ընդրա հետե, վար վիրի հեյվանու կաթնը ար ծըծալ»[44]: Էգ առյուծի նախատիպ կերպարից անցումը մարդակերպ Մայր դիցուհու կերպարին[45], առասպելաբանական պատկերացումներում միանգամից տեղի չի ունեցել: Ընթացքում ստեղծվել են անցողիկ փուլին բնորոշ բազմատեսակ միքսանտրոպիկ կերպարներ[46], որոնք ինքնուրույն դառնալով հանդերձ իրենց գոյությամբ ամբողջացնում էին Մայր դիցուհու բազմաշերտ ու բազմաբնույթ պաշտամունքը: Հայկական լեռնաշխարհի ուրարտական դարաշրջանի պաշտամունքը տալիս է նման մի շարք օրինակներ: Հատկապես ուշադրավ է գահի բրոնզե մաս հանդիսացած և էրմի-

---

[39] Խորենացի, Բ, ժբ, ժդ (հմմտ. Ադաթանգեղոս, Ե, 48, ՃԹ, 785, ՃԹ, 786, ՃԺ, 790, ՃԺԴ, 809):

[40] KBo. III, 4, III, 93.

[41] KUB. XXVI, 79, I, 18. Հմմտ. Հայկական լեռնաշխարհի «երկրներից» Խաուվայի առաջնորդ Hani-ի անունը (Г. Г. Георгадзе. Хетты и хурриты по древнехеттским источникам. — "Вестник древней истории", 1969, № 1, с. 78):

[42] В. В. Иванов, В. Н. Топоров. Лев. — МНМ, т. II, с. 41.

[43] Հայ ժողովրդական հեքիաթներ. հ. V, Երևան, 1966, էջ 362-382:

[44] Նույն տեղում, էջ 375:

[45] Հմմտ. Ապոլոնի կենդանական-տոտեմական նախատիպ գայլը, Աթենասի՝ բուն և օձը, Արտեմիսի՝ արջը, Հերայի՝ կովը և այլն (А. А. Тахо-Годи. Греческая мифология. М., 1989, с. 28-29):

[46] Դրանցից էին, օրինակ, հունական առասպելաբանությունից հայտնի այնպիսի կերպարներ, ինչպիսիք էին Կենտավրոսը, Սֆինքսը, Էքիդնան և այլն (А. А. Тахо-Годи. Նշվ. աշխ., էջ 25, 39-40):

տաժում պահվող արձանիկը, որը ներկայացնում է թևավոր կին-առյուծ[47]: Նրա կրծքին մահիկաձև մանյակ է (հմմտ. Անահիտ/Լուսին), իսկ աջ ուսին վարդյակաձև զարդ (հմմտ. Աստղիկ/Լուսաբեր խորհրդանիշը վարդյակ): Հնագույն Փոքր Ասիայի Մայր դիցուհին պատկերվում էր նաև կարճ, կատվի ականջներով, որոնք, ըստ Ե. Վ. Անտոնովայի, վկայում են ինչպես դիցուհու և ընձառյուծի կապի, այնպես էլ Մայր դիցուհու նաև ընձառյուծի տեսքով հանդես գալու մասին[48]:

Ուրարտական դարաշրջանի բրոնզե արձանիկ

Քանդակապատկեր Երզնկայի մոտերքում

Առյուծի և մարդակերպ դիցուհու առանձին-առանձին կերպարների ստեղծումից հետո առյուծը համարվում էր Մայր դիցուհու սրբազան կենդանին և շատ հաճախ պատկերվում էր իր տիրուհու հետ: Վ.Վ. Իվանովը ընձառյուծի խեթական պաշտամունքի ակունքները որոնում է վոքրասիական Զաթալ-Հյույուքի նորքարեդարյան մշակույթում[49], որի և նմանատիպ Հաջիլար հնավայրի Մայր դիցուհիները պատկերվում էին ընձառյուծների ուղեկցությամբ[50]: Բողազքյոյի խեթական տաճարից պեղված արձանիկը դիցուհուն պատկերում է թևավոր առյուծի կամ արծվառյուծի վրա հանդչող պավանդանին բազմած[51]:

Այս նույն ուղին է անցել նաև Սամուխայի Մայր դիցուհու կերպարը: Նրա վերաբերյալ Օ. Գարնին գրում է. «Խուռիական Իշտարին երկրպագում էին Սամուխայում և Տավրոսի շրջանի ուրիշ մի շարք քաղաքներում: Խաթուսիլի III թագավորը նրան էր ընտրել իր հովանավորուհի, իսկ թագավորի, այսպես կոչված, «Ինքնակենսագրությունը» ձոնված էր նրան: Դիցուհուն պատկերում էին թևավոր, առյուծի վրա և նրան կարելի է ճանաչել հանձին մի քանի կնիքների և այլ հուշարձանների վրայի թևավոր դիցուհու»[52]: Ասորեստանի Ասարհադդոն թագավորի (մ.թ.ա. 680–669թթ.) Շուբրիա//Աղձնիքի թագավորին հղած նամակում կարելի է հանդիպել

---

[47] Б. Б. П и о т р о в с к и й. Искусство Урарту. VIII-VI вв. до н.э. Л., 1962, с. 48-49, рис. 18.

[48] Е. В. А н т о н о в а. О характере религиозных представлений неолитических обитателей Анатолии. – "Культура и искусство народов Средней Азии в древности и средневековье". М., 1979, с. 31.

[49] В. В. И в а н о в. Разыскание в области анатолийского языкознания. 3-8. – "Этимология 1976", М., 1978, с. 154-155.

[50] Е. В. А н т о н о в а. *Նշվ. աշխ., էջ 30:*

[51] О. Р. Г е р н и. *Նշվ. աշխ., էջ 133:*

[52] *Նույն տեղում, էջ 122:*

այսպիսի տողերի. «Հրամայիր մունետիկին կանչել քո երկրում գտնվող այդ մարդկանց: Հավաքիր նրանց: Ոչ մի տղամարդու չթողնես և (...) էգ առյուծի առջև, մեծ տիկնոջ պարտադրիր նրանց գնալ տաճար»[53]: Ս. Հմայակյանի կարծիքով «էգ առյուծ» և «մեծ տիկին» կոչված Շուբրիայի գլխավոր դիցուհին Կյուբելեն է[54]: Քաջ հայտնի է Կյուբելեի և առյուծի կերպարների սերտ կապը ևս: Դիցուհին հաճախ պատկերվում էր առյուծներ լծված կառքով[55]:

Առասպելաբանական մտածողությամբ առյուծը սերտ կապ ուներ ուրիշ դիցուհիների՝ եփեսոսյան Արտեմիսի, Հեկատայի, Ատլանտայի, Ռեայի և այլոց հետ[56]:Հունական Արտեմիսը միկենյան արվեստում պատկերված է առյուծներով շրջապատված: Նրա հայտնի մակդիրներից էր «գազանների տիրուհի»-ն, իսկ Հոմերոսը նրան ուղղակի «առյուծ» (λέων) է կոչում[57]: Հին Միջին Ասիայում ևս իրանական Մայր դիցուհու և առյուծի պաշտամունքները հաճախ հանդես էին գալիս միաձույլ: Ս. Պ. Տոլստովը զուգահեռ է տեսնում առյուծի վրա պատկերված խեթական դիցուհու և խորեզմյան կնիքներին պատկերված այն հզոր դիցուհու միջև, որը թագակիր է, ձեռքերին ունի մական, արևի ու լուսնի խորհրդանիշեր և հենված է առյուծի կամ ընձառյուծի վրա[58]: Առյուծը սրբազան կենդանին էր նաև խուռիների կողմից պաշտված Սաուսկայի և Խեպատի[59]: Նույնը կարելի է ասել նաև աքքադական-ասորեստանյան Իշտարի մասին, որը կրում էր «ամեհի առյուծ» մակդիրը[60]: Համեմատաբար հեռու կանգնած զուգահեռներից հիշենք քանաանա-ամորեական qds դիցուհուն, որը, սիրո և պտղաբերության անձնավորումը լինելով հանդերձ, պատկերվում էր մերկամարմին և առյուծի վրա[61]: Եգիպտական մի քանի դիցուհիներ ևս սերտ կապի մեջ էին առյուծի հետ, իսկ զայրույթի պահին (օրինակ նրանցից Տեֆնուտը) դառնում էին կատաղի առյուծներ[62]:

Առյուծի և մյուս կատվազգի գիշատիչների պաշտամունքը խոր հնադարից սկսած գոյություն ուներ նաև Հայկական լեռնաշխարհում, մանավանդ որ այստեղ ևս քիչ չէր գրանց թիվը: «Աշխարհացույցը» Ծոփքի և շրջակայքի համար վկայում է. «Ունի Զորրորդ Հայք երէս եւ հաւս, եւ ի գազանաց գառեւծ»[63]: Առյուծի պաշտամունքի հնագույն օջախներից մեկը

---

[53] Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության պետական կրոնը. Երևան, 1990, էջ 43:

[54] Նույն տեղում, էջ 43–44:

[55] Е. В. А н т о н о в а. Նշվ. աշխ., էջ 27:

[56] В. В. И в а н о в, В. Н. Т о п о р о в. Նշվ. աշխ., հ. II, էջ 41: Ռեան ոչ միայն շրջում էր առյուծներ լծված կառքով, այլև կրում էր Λεοντοῖφρος «Առյուծակառք (բազմած)» մակդիրը (Anthologia Palatina, "Древнегреческо-русский словарь", т. I, М., 1958, с. 1019):

[57] Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Նշվ. աշխ., հ. II, էջ 509:

[58] С. П. Т о л с т о в. Древний Хореизм. М., 1948, с. 200-201.

[59] О. Р. Г е р н и. Նշվ. աշխ., էջ 121, М. Х а ч и к я н. Նշվ. աշխ., հ. II, էջ 636:

[60] В. К. А ф а н а с ь е в а, И. М. Д ь я к о н о в. Иштар. – "Мифологический словарь", М., 1991, с. 263.

[61] И. Ш. Ш и ф м а н. Кадшу. – МНМ, т. II, с. 21.

[62] В. В. И в а н о в, В. Н. Т о п о р о в. Նշվ. աշխ., հ. II, էջ 42:

[63] Ս. Ե ր ե մ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 107:

լինելու էր Արևմտյան Եփրատի մեծ գալարից հյուսիս գտնվող այն ժայռախումբը, որի հետևյալ նկարագրությունն է անում Հակոբ Մնձուրին. «Ամրրքարի դիմացը, գետին ձախը, այսինքն՝ իննըսունիններին զառիվերը ու անոր բարձունքը Ղափլան Ղայասին կա: Գետափեն մինչև զառավերին գագաթը իննըսունիններին քայլ է, ասկե ալ՝ անունը տված են: Ապառաժներ են: Մեկը՝ ամենամեծը, կատաղի վագրի մը կնմանի, որ բերանը բացեր է»[64]:

Ղափլան-Ղայասի//Kaplan – Kayasi թուրքերեն նշանակում է «Վագրի ժայռ», բայց հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհում վագրեր չեն եղել: Ըստ երևույթին, խոսքը հին հայերի կողմից էդ առյուծ ընկալված ժայռի մասին է: Արևմտաեփրատյան գավառներից ամենից արևմուտք ընկածը Արմաան//Ղուրուչային համընկնող Աղիւն և Առիւծ կոչված գավառն էր[65]: Այս անունը Ἀλυβῃ ձևով վկայված է դեռևս «Իլիականում» (II, 856). «Իսկ զորքերին Հալիզոնի - Էպիսթրոփոսն և Օդիոսը/ Բերել էին Ալիբեից, որտեղ ծնունդ կա արծաթի»[66]: Հուն. Ἀλυβῃ< *Ալիւ-//*Աղիւ-ն, իսկ Աղիւն գավառին արևմուտքից հարում էր Հալիսի ակունքների շրջանը, որի անունով էլ (ոչ թե հակառակը)[67] Հալիզոնները են կոչվել տեղի բնակիչները. Ἀλιξωνες//Ἀλιξωνες<*hali-zōn: Աղյուն//Աղիւն և Առիւծ կոչված գավառի կենտրոնն էր հունահռոմեական աղբյուրներում վկայված Analibna-ն[68], որը բյուզանդական մատենագրության մեջ հիշատակված Ἀναλιβόξωρα//*Ան-ալիւն-ա-ձոր ամրոցն է՝ ներկայիս Ղուրուչայ գյուղը[69]: Հունահռոմեական, բյուզանդական և հայկական հիշյալ անվանաձևերի համադրումից պարզվում է, որ դրանց առաջին բաղադրիչը ունեցել է *ան- տեսքը, իսկ երկրորդը՝ *աղիւն//*ալիւն տեսքը: Ըստ այսմ, այն ենթադրությունը, թե Analibna-ն «անի-ացիներ» է նշանակում, այն էլ հայերեն –ք-ի համարժեք վրացերեն -ը հոդնակիակերտի հավելումով[70], անհավանական է դառնում: Տեղանվան առաջին բաղադրիչը ան- տեսքն ունենալու հանգամանքը անհավանական է դարձնում նաև այն ենթադրությունը, թե դրա նախաձևը եղել է «Անի-Աղիւն», իսկ բնակավայրը այդպես է կոչվել ի տարբերություն «Անի Դարանաղեաց»-ի[71]:

Այս տեղանվան հունահռոմեական և բյուզանդական աղբյուրներից հայտնի տարբերակների հիմքում հնդեվրոպական *an-//*Han- նախաձևն է, ուստի An-alibna//*Ան-աղիւն նշանակում է «տատիկ Աղիւն» կամ «իգական նախնի Աղիւն»: Իսկ թե ինչ է նշանակում Աղիւն-ը, ցույց է տալիս անվանակիր գավառի երկրորդ անունը՝ Առիւծ-ը: Սրա առկայությունը «Աշխարհացույցում»[72] իղուր է համարվում «սխալ ընթերցման

---

[64] Հ. Մ ն ձ ո ւ ր ի. Նշվ. աշխ., էջ 424:

[65] Հ. Ա Դ Ո Ն Ց. Նշվ. աշխ., էջ 46-47, Ս. Ե Ր Ե Մ Յ Ա Ն. Նշվ. աշխ., էջ 33, 35, 106:

[66] Հ ո մ է ր ո ս. Իլիական (հին հունարեն բնագրից թարգմանեց Հ. Համբարձումյան). Երևան, 1955, էջ 75:

[67] Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 236:

[68] P t o l., V, 6, 18; Հ. Ա Դ Ո Ն Ց. Նշվ. աշխ., էջ 53, 55:

[69] Ս. Ե Ր Ե Մ Յ Ա Ն. Նշվ. աշխ., էջ 33, 35:

[70] Հ. Ա Դ Ո Ն Ց. Նշվ. աշխ., էջ 57:

[71] Ս. Ե Ր Ե Մ Յ Ա Ն. Նշվ. աշխ., էջ 33:

[72] Ղ. Ի Ն Ճ Ի Ճ Ե Ա Ն. Ստորագրություն հին Հայաստանեայց. Մեծ Հայք. Վենետիկ, 1822, էջ 2, Հ. Հ ի ւ բ շ մ ա ն. Հին Հայոց տեղւոյ անունները. Վիեննա, 1901, էջ 306:

հետևանք»[73]: Հ.-Ե. *reu-g'- «մռնչալ» նախաձևից սերած առիւծ[74] բառն ստեղծվել է նշված գազանի բուն անվան թաբուի ենթարկվելու պատճառով և նշանակում է «մռնչացող (գազան)»: Հնդեվրոպական նախալեզվում գազանների արքան կոչվել է *leu-: Այս նախաձևից են սերում ազգակից լեզուների հետևյալ բառերը. հուն. λεων (<*λεϝων), լատին. leo (սեռ. հոլով. leonis), խեթերեն և լուվիերեն ualua-//ualui-, հին վերին գերմ. lewo «առյուծ»[75]: Նույն նախաձևից, հայերենի օրինաչափությունների համաձայն, ստացվելու էր *ա-լիւ-ն//*ա-ղիւ-ն, որից և Ալիւն/Առիւծ գավառանունը: Վերջնաձայն ն-ի համար հմմտ. կենդանիների անունների բնորոշ –ն մասնիկի հավելումը գառն, եզն, ձուկն, մուկն և այլ բառերում:

Հնագույն հայերենում «առյուծ» նշանակող *աղիւն (*ալեւ//*աղիւ//*ալեւ) բառի գոյությունը հաստատում է նաև Մեծ Հայքի Փայտակարան նահանգի Ալեւան//Աղվան<* Աղիւան գավառի անվան միջոցով: Գավառը զբաղեցնում էր ներկայիս իրանաադրբեջանական սահմանին հարող տարածքը Ղարասու գետի ստորին հոսանքի և Հաշտասար լեռան միջև[76]: Աղեւ - ան//Ալեւ - ան բաղադրիչների բաժանվող տեղանվան ալեւ- բաղադրիչի «առյուծ» իմասան ունենալու տեսանկյունից ուշադրության է արժանի այս գավառի տարածքում ավելի ուշ հիշատակված Ասլանդուզ տեղանունը: Անվանակիր բնակավայրը գտնվում է Արաքսի աջափնյակում, նրա մեջ Ղարասու գետի թափվելու վայրից ոչ հեռու, ձախափնյակի Հորադիզ կայարանի գրեթե դիմացը[77]: Ասլանդուզ < թրք., ասլան «առյուծ» +դուզ, ղյուզ «հարթավայր»: Ալեւան անունն է կրել նաև Համդալլահ Ղազվինիի հիշատակած «Ալվան ռաբաթը՝ դեպի Ահար քաղաք տանող ճանապարհին»[78]: Ալվան –ր հայերենի օրինաչափության համաձայն, կորցրել է անշեշտ ի-ն. Ալվան<* Ալիւան//Ալեւան, որոնցում ալիւ-//ալեւ- < հ.-ե. *leu - «առյուծ»: Ասվածները հիմք են տալիս պնդելու, որ հնագույն հայերենում ժամանակին գոյություն ունեցած հ.-ե. *leu - «առյուծ» արմատից սերող «առյուծ» նշանակող բառը թաբուի ենթարկված լինելու պատճառով հետզհետե դուրս է մղվել լեզվի ակտիվ բառապաշարից և փոխարինվել է հ.-ե. *reu-g- «մռնչացող» նախաձևից սերող առիւծ//առիւծ բառով: Նույն թաբուի պատճառով են հնդիրանական լեզուներում անհետացել հ.-ե. *leu - արմատից ծագած համապատասխան բառերը:

«Առյուծ» նշանակող *աղեւ բառի Մայր դիցուհու պաշտամունքի հետ ունեցած սերտ կապի վերհուշն է, ըստ երևույթին, պահում ինչպես Բաղեշ (Բիթլիս) քաղաքի մոտ գտնվող Աղեւու Աստվածածին կոչված վանքի անունը[79], այնպես էլ Սյունիքի Արևիկ գավառի (հետագա Մեղրու շրջանի)

---

[73] Ս. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 33:

[74] Հ. Աճառյան. Նշվ. աշխ., հ. I, Երևան, 1971, էջ 259:

[75] Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, Նշվ. աշխ., հ. II, էջ 507-510:

[76] Ս. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 32, Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ ՏԲ). հ. I, Երևան, 1986, էջ 67:

[77] Նույն տեղում, էջ 335:

[78] Ս. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 32:

[79] Մ. Միրաքորեան. Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի. մասն Ա-Գ, Կ.Պոլիս. 1884-1885, էջ 86:

Աղվանակ կամ Աղվանք կոչված գյուղատեղիի և նույն վայրում Մալեւ դետի ու ձորի անունները[80]: Աղվանակ<*աղիւ-ան-ակ, իսկ Աղվանք<*աղիւ-ան-ք: Դեսանունը Մա-լեւ բաղադրիչների տրոհելիս, սրա երկրորդ բաղադրիչը կարելի է նույնացնել հ.-ե. *leu-ից սերած (առանց նախահավելվածական ձայնավորի) արմատի հետ, իսկ առաջին Մա բաղադրիչը համարել հ.-ե. *ma- «մայրիկ» արմատից սերած դիցանունը: Օրինակ, Մայր դիցուհին նաև Մã անունով էր հայանի Թրակական, փռյուգական և փոքրասիական ցեղերին[81]:

Բյուզանդիայի Լևոն V Հայկազն կայսրին (813–820 թթ.) առնչվող անուններում ևս հանդիպում ենք հ.-ե. *leu արմատից ծագած և «առյուծ» նշանակող բառերի: Ըստ ավանդության, հայազգի այս կայսեր հայրը՝ Պարտանը կամ Պարսանը, Աղվանից աշխարհի Առուծ բերդից էր[82]: Հ. Աճառյանն ավանդությունը համարում է կեղծիք. «Լևոնի հայրն էր Վարդ, որ վերածել են Պարտանի և ապա Պարսամի»[83]: Սակայն ոչ մի ավանդություն առանց հիմքի չի ստեղծվում: Կարծում ենք, որ պատահական զուգադիպումով չէ, որ Արմենիակների բանակաթեմի զորավար Վարդ Արծրունու որդին՝ ապագա կայսրը[84], Լևոն//Λέων (<հուն. λέων «առյուծ») է կոչվել[85], երբ հոր ծննդավայրը, ըստ ավանդության, Աղվանից աշխարհի Առուծ//Ռուիւծ «առյուծ» բերդն էր: Բնականաբար, Արծրունի պատրիկի հայրենիքը որոնելու ենք ոչ թե հեռավոր Աղվանք//Ալբանիայում, այլ Արծրունիների հարազատ Վասպուրականում: Այստեղ Կոտուրի լեռնահամակարգի լեռնաշղթաներից մեկը Ալվան (թրք. Աղվան-դաղ «Ալվան լեռ») էր կոչվում[86]: Կասկած չի հարուցում նաև այս Աղվան-ի «առյուծային» ստուգաբանությունը. Աղվան<*աղիւ-ան, որտեղ -ան-ը տեղանվանակերտ վերջածանց է (հմմտ. Դերջ-ան, Երեւ-ան, Սեւ-ան):

Խեթ թագավոր Արնուվանդա III-ի (մ.թ.ա. 1235–1215 թթ.) դեմ ապստամբած այսրեփրատյան ցեղային երկրների պարագլուխներից մեկը Hinzuta քաղաքից էր (mu Hi-in-zu-u-ta)[87]: Այս քաղաքի անունը նույնացնում են Անձիտ//Անդլիտենի հետ և, ըստ այդմ, տեղադրում Ծովք//

---

[80] ՏԲ, հ. I, էջ 197: Ա. Ա. Ա ս լ ա ն յ ա ն, Հ. Հ. Դ ր գ ե ա ր յ ա ն. Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան. Երևան, 1981, էջ 19, 128:

[81] В. Г е о р г и е в. Исследования по сравнительно-историческому языкознанию. М., 1958, с. 131. Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները. Երևան, 1970, էջ 112: В. В. С т р у в е. История древнего Востока. Л., 1941, с. 254.

[82] Մ. Ո ւ ղ ո ւ ր լ ե ա ն. Պատմութիւն հայոց գաղթականութեան եւ եկեղեցւոյ նոցա ի Լիւռոնոյ քաղաքի. Վենետիկ, 1891, էջ 201–202:

[83] Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց անձնանունների բառարան. հ. IV, Երևան, 1948, էջ 237:

[84] Կ. Տ ե ր - Ս ա հ ա կ ե ա ն. Հայ կայսերք Բիւզանդիոնի. հ. Ա, Վենետիկ, 1905, էջ 155:

[85] Հմմտ. ուրարտական դարաշրջանի Şinaiibi անձնանունը, որի –alibi բաղադրիչը կարելի է ընթերցել նաև *aliui, իսկ առաջին բաղադրիչը կամ ծին բառն է՝ «ծնունդ» իմաստով (այս դեպքում՝ Şin-alibi//«Ծնունդ առյուծի, Առյուծածին»), կամ ցին բառն է (այս դեպքում՝ Şin-alibi//«Ցինառյուծ, Արծվառյուծ». Հմմտ. գրիֆոնի առասպելաբանական կերպարը):

[86] ՏԲ, հ.I, էջ 195:

[87] KUB, XXIII, 72, հե, 33.

Isuua-ում[88]: Բայց պատահական և հեռավոր է դրանց հնչյունական նմանությունը: Ավելի ճիշտ կլինի Hinzuta-ն համարել այն վայրը, որտեղ հետագայում գտնվում էր Ընձայաց Ս. Աստվածածին վանքը՝ հիշատակված XIV դ. հայերեն ձեռագրերից մեկում Ուռի գյուղի (Երզնկայի գավառի Կամախի շրջանում) մոտ[89]: Ընձայաց-ը սեռական հոլովի հոգնակին է, որի հոգնակի ուղղականը կլինի Ընձայք<*ինձ+այ+ք, որտեղ -այ-ը վերջածանց է (հմմտ. արք-այ, մօր-այ, ափ-ափ-այ և այլն)[90]: Hinzuta տեղանունը հնչությամբ տրոհվում է Hinz- և -uta բաղադրիչների: Սրանցից առաջինը ենթադրում է հայերեն *հինձ նախաձևը, որը, մեր կարծիքով, ինձ-ի ավելի հին վիճակն է արձանագրել. հ.-ե. *sing'h->*հինձ>ինձ: Հմմտ. հնդեվրոպական նախալեզվի նախաձայն *s-ի որպես հ արտացոլումը համ, հին, հիմն, հուն և այլ բառերում[91]: Ըստ երևույթին, Hinz-//*հինձ-ը, ի տարբերություն ինձ-ի, ոչ թե «ընձառյուծ», այլ «առյուծ» է նշանակել, ինչը ինձ-ի նախնական իմաստն է համարվում (հմմտ. հին հնդկերեն simha «առյուծ» <հ.-ե. *sing h-)[92]: Hinzuta-ի (<*Hinz-uta) երկրորդ բաղադրիչը – ուտ վերջածանցն է, որը որպես տեղանվանակերտ է հանդես գալիս նաև այնպիսի տեղանուններում, ինչպիսիք են բուստնուններից կերտված Խնձորուտ-ը, Կաունուտ-ը, Տանձուտ-ը և կենդանիների անուններից կերտված Արջուտ-ը, Գայլուտ-ը, Եղնուտ-ը և այլն:

Արևմտյան Եփրատի մեծ գալարի շրջանում Մայր դիցուհու պաշտամունքի առաջնային լինելու և այստեղ նրա սրբազան կենդանու անուններով կերտված տեղանունների դոյության հանդամանքները մեզ իրավունք են տալիս վերջիններիս նկատմամբ մեր ունեցած մոտեցումը տարածելու նաև տեղական Մայր դիցուհու պաշտամունքի կենտրոնի՝ Սամուխայի վրա: Կարծում ենք, որ Սամուխա տեղանվան մեջ առկա է հինարիական (հին հնդիրանական) բարբառներից մեկի «առյուծ» նշանակող բառը: Ինչպես տեսանք, հնդեվրոպական միևնույն նախաձևից հին սերում միայն հայերենում և հին հնդկերենում պահպանված ինձ «ընձառյուծ» և simha «առյուծ» բառերը (< հ.-ե. *sing'ho-)[93]: Ըստ երևույթին, Արևմտյան Եփրատի մեծ գալարի շրջանում հնագույն հայերենով խոսած էթնիկական տարրի կողքին ժամանակին գոյություն է ունեցել արիական (հնդիրանական) ընդհանրության մի հատված, որի բարբառը ինչ-որ չափով տարբերվել է հին հնդկերենից՝ նրա simha-ի դիմաց ունենալով *samha «առյուծ» բառը: Այս վերջինն է, որ խեթական սեպագրության մեջ վերարտադրվել է Ša-mu-ha// Samuha ձևով: Որ խեթերենում միջնաձայն u-ն հնչյունական արժեք չի ունեցել և վանկարար ձայնավորի դեր է կատարել, ցույց է տալիս նույն անվան Samaha (u-ի փոխարեն a-ով) տարբե-

---

[88] Վ. Խաչատրյան. Նշվ. աշխ., էջ 112, ծան. 264, Н. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 230, 256.

[89] ՏԲ, հ. II, Երևան, 1988, էջ 379:

[90] Հայոց լեզվի պատմական քերականություն. հ. II, Երևան, 1975, էջ 88–89:

[91] Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 146, 147, 152:

[92] Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Նշվ. աշխ., հ. II, էջ 506:

[93] Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. II, Երևան, 1973, էջ 243, Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Նշվ. աշխ., հ. II, էջ 506, 507:

րակը[94]*: Հինարիական ընդհանրության այս հատվածը առավել մոտ էր լինելու միտանիական արիացիներին, որոնց լեզվում ևս գոյություն ունեին ինչպես հին հնդկերենին, այնպես էլ հին իրանական լեզուներին ոչ բնորոշ օրինաչափություններ: Օրինակ, դրա մասին են խոսում «յոթ» թիվը նշող բառերի տարբեր արտասանությունները հնդիրանական այդ լեզուներում. հին հնդկ. sapta, ավեստ. hapta, միտանի-արի. satta*[95]*:*

Դարանաղի գավառը գտնվում էր Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհում Աղյուն և Նկեղիք գավառների միջև[96]*: Դարանաղի տեղանունը տրոհվում է դարան- և -աղի բաղադրիչների, որոնցից երկրորդը տեղանվանակերտ վերջածանց է. հմմտ. Մանան-աղի, Մարդ-աղի, իսկ ուրարտական դարաշրջանից՝ Aramali*[97]*: Քննարկվող հարցերի տեսանկյունից հետաքրքրական է այն փաստը, որ Արևմուտքում* Даранали*//Daranalis և* Даранлʼbba *(-ali տեղանվանակերտ վերջածանցի փոխարեն վերջինում առկա է նրան համարժեք -issa-ն)*[98] *անուններից բացի Դարանաղին հայտնի է եղել նաև Analibla//Analibna անվամբ*[99]*: Վերջինս հայկական *(հ)Ան-աղիւն ձևն է ենթադրում «իղական նախնի առյուծ» ստուգաբանությամբ: Դարանաղի տեղանվան առաջին բաղադրիչը դարան բառն է, որ «Աստվածաշնչում» և «Հայսմավուրքում»*[100] *գործածված է նաև «առյուծի որջ» իմաստով, իսկ ընդհանրապես նշանակում է «ամրանալու տեղ», «ծածուկ տեղ, ուր պահվելով՝ թշնամու վրա անակնկալ հարձակում են գործում»*[101]*: Դարան-ը ևս կարելի է բաժանել բաղադրիչների դար- արմատ և -ան վերջածանց: Սրանցից դար-ը կարելի է բխեցնել Դարանաղիի տարածքի հինարիական տարրի լեզվից. հմմտ. հին հնդկ.* dara/darı *«խոռոչ, անձավ, որջ»*[102]*: Հայերեն դարան-ը իրանական փոխառություն համարելով հանդերձ, Հ. Աճառյանն ավելացնում է, որ մեր բառը կարելի է բխեցնել *dar- «ճեղքել» արմատից, որով ավեստյան darana-ն նույնանում է սանս. dharana «փապար, խոռոչ, ծերպ» բառի հետ և հայ. դարան «թաքստոց» բառի նախնական իմաստն է լինում «լեռան մեջ ճեղք և այլն», ինչպես ցույց է տալիս վրաց. դարանի*

---

[94] KBo, III, 4, ՀԵ, III, 45.

[95] Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. *Նշվ. աշխ., հ. II, էջ 547, ծան. 1: Ս. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 49, 106:*

[96] *Ս. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 49, 106:*

[97] *Ն. Ադոնց. Նշվ. աշխ., էջ 211,* Н. Адонц, *Նշվ. աշխ., էջ 56,* Гр. Капанцян. *Նշվ. աշխ., էջ 443, 445:*

[98] Н. Адонц. *Նշվ. աշխ., էջ 55,* Гр. Капанцян. *Նշվ. աշխ., էջ 444:*

[99] Н. Адонц. *Նշվ. աշխ., էջ 53:*

[100] *«Հայսմավուրքի» օրինակն է. «Հրամայեաց առիւծուն, եւ ելեալ գնաց ի դարանն իւր» (Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. Ա, Երևան, 1979, էջ 603):*

[101] *Հ. Աճառյան. Նշվ. աշխ., հ. II, էջ 633: Դարան-ը նաև «առյուծի որջ» նշանակելու մասին կարող են, մեր կարծիքով, վկայել նաև ներկայիս Աբովյան քաղաքի շրջակայքի ուրարտական դարաշրջանի* Ulua(ni) *և դրա կենտրոնի* Dara(ni) *անունները (*Հ. Արտյունյան. *Նշվ. աշխ., էջ 73, 206-207): Եթե սրանցից երկրորդը դարան բառն է (կամ դրա արմատակիցը), ապա առաջինը՝* U-leu-a(ni) *ընթերցման դեպքում, բացահայտում է իր* –leu-<*հ.-ե.*leu- «առյուծ» բաղադրիչը:* Ulua(ni)//*Uleua(ni) *հմմտ.սեպ.* Manulu//Մանլեւ, *սեպ.* Alištu//Ալստեւ, *սեպ.* Bulua//Բղեւ *(Ց. Կարագեոզեան. Սեպագիր տեղանուններ. Այրարատում և հարակից նահանգներում. Երևան, 1998, էջ 82, 166-167):*

[102] «Worterbuch Sanskrit-Deutsch» von Prof. Dr. Dr. habil Klaus Mylius. Leipzig, 1980, S. 202.

«քարայր, ճեղք՝ ժայռի կամ հողի մեջ»[103]: Հայերենից փոխառյալ վրացերեն դարանի-ն հուշում է, որ հայերեն դարան բառի նախնական իմաստը ևս լինելու էր «քարայր»: Իսկապես, Դարանաղի գավառի Սեպուհ լեռը հանրահայտ էր իր քարայրներով: Գ. Սրվանձտյանցը նկատել է, որ Սեպուհ լեռը ճգնավորների և անապատականների համար «հարմար քարայրներ, խոռոչներ և ծածուկ ձորերը պատրաստ կընծայեր... և իրրև ապառաժ ու անբնակ լեռն՝ կրնար խուզարկվելե թագուն մնալ»[104]: Կարծում ենք, որ դարան-ի նախնական «քարայր» իմաստից են ածանցվել «առյուծի որջ» (կամ առհասարակ «գազանի որջ») և «ծածուկ տեղ, ամրանալու տեղ» իմաստները:

Բանն այն է, որ քարայրները դեռևս խոր նախնադարից նախամարդու և այրաբնակ գազանների միջև մղված արյունահեղ պայքարի առարկա են եղել: «Այրերին տիրապետելը եղել է նեանդերթալյան տիպի մարդու խոշոր նվաճումներից մեկը, մանավանդ, որ այդ այրերը նախապես ծառայում էին որպես վայրի կենդանիների պատսպարման վայրեր: Նրանց դուրս վանելու համար մարդը դիմում էր ղենքի և հատկապես կրակի օգնությանը»[105]: Քարայրների առկայության պատճառով է, որ Հայկական լեռնաշխարհի հինքարեդարյան բնակավայրերի խմբավորումների հանդիպում ենք հենց լեռնային շրջաններում: Գազաններից խլված քարայրները դարձել էին հինքարեդարյան մարդկանց օջախներ ունեցող հաստատունտևական կացարաններ[106]: Միջին քարի դարում ևս Հայկական լեռնաշխարհի բնակավայրերը սովորաբար գտնվել են քարայրաշատ վայրերում[107]: Այդ և հետագա դարաշրջաններում քարայրարնակ մեր նախնիների կյանքում տոհմի շարունակման և օջախի պահպանման գործում համայնքի ղեկավար և տնտեսվար մոր ունեցած դերն է, որ պայմանավորել է Մայր դիցուհու բազմաշերտ պաշտամունքի մեջ ոչ միայն օջախի, այլև քարայրների ու դրանց նախնական բնակիչների՝ գիշատիչ գազանների, պաշտամունքների ներառումը:

Առասպելաբանական մտածողությամբ, քարայրների նախնական բնակիչ առյուծների, ընձառյուծների և մյուս գիշատիչ գազանների էգերը (մայր գազանը), որպես մայրական սկզբունքը կրող էակներ, զուգադրվել են պտղաբերության, բերրիության ու առատության հովանավոր Մայր դիցուհու հետ և համարվել նրա նախնական դրսևորումները: Այսուհանդերձ, քարայրաշատ վայրերը՝ մասնավորապես Դարանաղին, միայն «առյուծի որջ» լինելու և օջախ ունենալու պատճառով չէ, որ դարձել են Մայր

---

103 Հ. Ա ճ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., հ. I, էջ 633:

104 Գ. Ս ր վ ա ն ձ ա յ ա ն ց. նշվ. աշխ. հ. II, էջ 348:

105 Ս. Ս ա ր գ ա ր յ ա ն. Նախնադարյան հասարակությունը Հայաստանում. Երևան, 1967, էջ 74:

106 Նույն տեղում, էջ 88:

107 Նույն տեղում, էջ 111: Քարայրները ոչ միայն ապաստարան, այլև կացարան են ծառայել անգամ XX դ.: Հին Աղյուն գավառի տարածքում եղած բազմաթիվ քարայրների նման գործածության մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում բնիկ արմատների Հակոբ Մնձուրին. «Մեր գյուղին լեռներն էին, մենք ու իրաշնարած քուրդերը կային, որոնք ձմեռը իրենց հոտերով Ղարալուտախի ու Եվրատի քարայրները կձմեռեին, իսկ ամառը Ղարա Սըրթի այս արոտները կբարձրանային» (Հ. Մ ն ձ ո ւ ր ի. նշվ. աշխ., էջ 238):

դիցուհու պաշտամունքի կարևոր կենտրոններ: Դարանաղիի Անի քաղաքի անվանական երկվորյակ շիրակյան Անին, էգ առյուծը վինանշան ունենալով հանդերձ, որպես Մայր դիցուհու պաշտամունքի հնագույն կենտրոն նախ և առաջ պարտական է եղել իր քարայրաշատ վայր լինելուն[109], *որովհետև նախնադարի մարդկանց առասպելաբանական պատկերացումներում քարայրը ընկալվում էր նաև երկրի (ուրեմն, նաև նրան անձնավորողների) vagina*[110]: *Դարանաղիի (<*դարան-աղի) «առյուծի որջ» եղած քարայրները, ըստ այսմ, առասպելաբանական մտածողությամբ ընկալվել են որպես նախ «էգ առյուծի», ապա՝ նրա հետնորդ Մայր դիցուհու պտղաբեր սրդան և հաճախ վերածվել սրբավայրերի:*

Քարայրները՝ որպես Մայր դիցուհու հնագույն սրբավայրեր, մեր կարծիքով, պատճառ են դարձել այնպիսի բառերի երևան գալուն, ինչպիսիք են դարին-ը (դար-ին հմմտ. լուս-ին, կարդ-ին, դեղ-ին և այլն) և դարաստ-ը (դար-աստ հմմտ. առագ-աստ, ղգ-աստ, իմ-աստ և այլն): Սրանցից առաջինը «սրբութիւն սրբոյն յաւիտենից»[110], *իսկ երկրորդը՝ «դրախտ»*[111] *է նշանակում:*

ИСТОКИ КУЛЬТА ВЕЛИКОЙ БОГИНИ ИЗ САМУХИ

САРГИС ПЕТРОСЯН

Р е з ю м е

Город Самуха находился на востоке Хеттской державы и считался спорной территорией между хеттами и хайасцами. Самуха была известна культом богини Inanna// Иштар, которую, как Великую богиню, изображали стоящей на льве или в окружении львов. Район Самухи позже у древних армян был известен под именами *Աղիւն* и *Առիւծ*. Последнее слово означает "лев" и, по нашему мнению, является переводом более древнего названия района, т.е. *Աղիւն*, тоже означает "лев": *Աղիւն*<*a-liu-n, где компонент -liu-< и.-е. leu̯- "лев". На основании сказанного мы можем этимологизировать и топоним *Самуха*, считая его результатом такого же мифологического мышления: хеттск. Samuha<*Samha "лев" (ср. др.-инд. simha "лев"). Район среднего течения реки Западный Евфрат древние армяне называли *Դարանաղի* (<*Դարան-* + топонимический суффикс *-աղի*). В основе этого топонима лежит др. арм. слово *դարան*, как "тайное место", "укрытие", так и "берлога льва"(например, в переводе Библии). При помощи первоначального значения этого слова выявляются истоки "львиного" компо-

---

108 *Լ. Պ ե տ ր ո ս յ ա ն. Մի հին պաշտամունքի հետքերը միջնադարյան Անիում.– «ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ», IV, Գյումրի, 2001, էջ 98–99:*

109 В. Н. Т о п о р о в. Пещера.– МНМ, т. II, с. 311.

110 *Բառգիրք հայոց (քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ. Ամատունի). Երևան, 1975, էջ 75:*

111 *Նույն տեղում, էջ 74:*

нента в культе Великой богини. По мифологическим воззрениям древних людей, пещера, т.е. берлога льва – это одновременно лоно матери-земли, а образ львицы – первоначальной хозяйки пещер, символ материнства. По этой причине образ львицы впоследствии стал атрибутом тех богинь, которые олицетворяли мать-землю.

THE ROOTS OF THE CULT OF THE GREAT GODDESS FROM SAMUHA

SARGIS PETROSYAN

S u m m a r y

The town of Samuha was situated in the East of the Hittite state and was considered an arguable territory between the Hittites and the Hayasas. Samuha was famous for its cult of goddess INANNA=Istar, who, as the Great Goddess, was represented either standing on a lion or accompanied by lions. District of Samuha later was known among the ancient Armenians by the names *Աղիւն* and *Առիւծ*. Both these placenames as well as Samuha mean "lion" (Hittite Samuha<*Samha Cf: Old Ind. simha "lion"). The ancient Armenians called the neighbouring district *Դարանաղի (<դարան-աղի)*, in which the component "*դարան*" means "shelter" and "a lion's den". The original meaning of this word was "a cave". According to the ancient mythological views the cave was not only "a lion's den", but also the lap of the Mother Earth. Naturally, later the image of the lioness became the attribute of the goddesses personifying the Mother Earth.